ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 53-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 22-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի մարտի 13-ի «Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում մրցութային հիմունքներով դիմորդների ընդունելության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2024 թվականի հունվարի 5-ի թիվ 3-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 22-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
23.07.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2025 թվականի
հուլիսի 23-ի N 53 - Լ հրամանի

«Հավելված
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2025 թվականի
մարտի 13-ի N 22 -Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. «ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կրթահամալիր)՝ ոստիկանական ուսումնական ստորաբաժանման «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկանության սպա» որակավորմամբ միջին մասնագիտական կրթական ծրագրով դիմորդների ընդունելության կարգը:

2. Կրթահամալիր կարող են դիմել «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 11-րդ և 55-րդ հոդվածների պահանջներին և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» № 175-Ն որոշման առաջին հավելվածով նախատեսված ֆիզիկական պատրաստականության նորմատիվների հանձնում ենթադրող բժշկատարիքային խմբերին համապատասխանող դիմորդները: Ոստիկանության ծառայող հանդիսացող դիմորդը պետք է ունենա նաև ոստիկանության կրտսեր խմբի պաշտոնում առնվազն մեկ տարվա ծառայության ստաժ:

3. Տվյալ ուսումնական տարվա դիմորդների ընտրության և ընդունելության ստուգումների (քննությունների) կազմակերպման և ընթացքի վերահսկման նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով ստեղծվում են մանդատային և ընդունող հանձնաժողովներ:

4. Դիմորդը Կրթահամալիր է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ ոստիկանության կողմից տրված՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ)՝ պատճենով.

2) դիմում.

3) կրթության մասին վկայական՝ դիպլոմ կամ ատեստատ՝ պատճենով.

4) 4 լուսանկար (4x6 չափսի).

5) զինվորական գրքույկ (արական սեռի դիմորդների համար).

6) մերձավոր ազգականների (հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին/կին, ամուսնու/կնոջ հայր, մայր, քույր, եղբայր, զավակ) անձնագրերը, մահացած լինելու դեպքում՝ մահվան

վկայականը և դրա պատճենը, դիմորդի ամուսնացած լինելու դեպքում՝ նաև ամուսնության վկայականը, անչափահաս լինելու դեպքում՝ ծննդյան վկայականը.

7) սոցիալական քարտ կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանք՝ պատճենով.

8) տեղեկանք բնակության վայրից.

9) տեղեկանք հաշվառման վայրից.

10) սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերով նախատեսված արտոնություններից օգտվելու իրավունք վերապահող փաստաթղթեր (բնօրինակը և պատճենը):

5. Ոստիկանության ծառայող դիմորդները սույն կարգի 4-րդ կետի 5-րդ, 6-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացնում:

6. Դիմորդն ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար յուրաքանչյուր ստուգման ձևի համար վճարում է 1500-ական (հազար հինգհարյուրական) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարները մուտքագրվում են Կրթահամալիրի բանկային հաշվին:

7. Սույն կարգի 17-րդ կետով և 18-րդ կետի 2-4-րդ ենթակետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են վճարից: Մանդատային հանձնաժողովը իր հայեցողությամբ դիմորդին կարող է ազատել վճարից: Անկախ մրցույթին մասնակցելուց և ընդունելության արդյունքից՝ վճարված գումարը դիմորդին հետ չի վերադարձվում:

8. Ընդունելության ստուգումների (քննությունների) գործընթացը կազմակերպվում է Կրթահամալիրում:

9. Ընդունելության ստուգումները (քննությունները) անցկացվում են հայերենով:

10. Անհարգելի պատճառով ստուգման (քննության) չներկայացած կամ անբավարար գնահատականներ ստացած դիմորդը զրկվում է հետագա ստուգումներին (քննություններին) մասնակցելու իրավունքից:

11. Ընդունող հանձնաժողովն իրավունք ունի՝ ծածկագրից օգտվող կամ ստուգման (քննության) բնականոն ընթացքը խանգարող դիմորդին զրկելու տվյալ և հետագա ստուգումներին (քննություններին) մասնակցելու իրավունքից:

12. Ստուգումների (քննությունների) արդյունքները դիմորդներին հայտնում են ստուգման օրը: Դիմորդն իրավունք ունի ստուգման (քննության) արդյունքները բողոքարկել ընդունող հանձնաժողովին՝ գնահատականը հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում:

13. Բողոքարկված աշխատանքի վերագնահատման անհամաձայնության դեպքում 24 ժամվա ընթացքում դիմորդը կարող է դիմել ընդունող հանձնաժողովին՝ անկախ փորձագետ հրավիրելու համար:

14. Մրցույթով անցած դիմորդի հետ, մինչև նրան որպես սովորող հրամանագրելը, Կրթահամալիրը կնքում է ուսման համար պետության կողմից կատարված ծախսերի փոխհատուցման պայմանագիր:

15. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած դիմորդները համարվում են սովորող՝ Կրթահամալիրի ռեկտորի հրամանով: Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած ոստիկանության ծառայողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվում են կադրերի գործող ռեզերվում և գործուղվում Կրթահամալիր:

16. Ստուգումները հանձնած, սակայն մրցույթով չանցած դիմորդներին իրենց ցանկությամբ տրվում է ստուգումների արդյունքների մասին համապատասխան տեղեկանք:

17. Ընդունելության ստուգումների (քննությունների) դրական արդյունքներով մրցույթից դուրս ընդունվում են հետևյալ դիմորդները՝

1) զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակները, ծնողները, ամուսինը (կինը).

2) ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) ոստիկանության ծառայողների երեխաները:

18. Հավասար միավորների դեպքում մրցույթում առավելությունը տրվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով (շքանշաններով և մեդալներով) պարգևատրվածներին.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ծառայողների երեխաներին.

3) երկկողմանի ծնողազուրկ երեխաներին.

4) ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ հաշմանդամ դարձած ոստիկանության ծառայողների երեխաներին:

19. Ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգման (թեստավորման), հայոց լեզվի ստուգման (թեստավորման) և ֆիզիկական պատրաստականության ստուգման արդյունքների հիման վրա: Մրցույթում հավասար արդյունքներ ունենալու դեպքում հաշվի է առնվում ավարտական փաստաթղթի գնահատականների միջին թվաբանականը:

20. Դիմորդի տարիքը և ծառայության ստաժը հաշվարկվում են ընդունելության ստուգումների (քննությունների) համար սահմանված ժամկետի վերջին օրվա դրությամբ:

21. Ընդունելության հետ առնչվող կամ մրցույթի անցկացման ընթացքում ծագած հարցերը, որոնք չեն սահմանվում սույն կարգով, կանոնակարգվում են կրթության բնագավառին առնչվող իրավական այլ ակտերով:

2. «ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆ» ԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

22. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր)՝ «Ոստիկանական գործ» մասնագիտության «Քրեական ոստիկան» և «Համայնքային ոստիկան» որակավորումներով արհեստագործական կրթական ծրագրերով դիմորդների ընդունելության (այսուհետ՝ ընդունելություն) հետ կապված հարաբերությունները:

23. Ընդունելության համար կարող են դիմել առնվազն բակալավրի որակավորում ունեցող այն անձինք (այսուհետ՝ դիմորդ), որոնք համապատասխանում են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 11-րդ և 55-րդ հոդվածների պահանջներին և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» № 175-Ն որոշման առաջին հավելվածով նախատեսված ֆիզիկական պատրաստականության նորմատիվների հանձնում ենթադրող բժշկատարիքային խմբերին:

24. Դիմորդի տարիքը հաշվարկվում է ընդունելության ստուգումների համար նախատեսված ժամանակացույցով սահմանված ժամկետի վերջին օրվա դրությամբ:

25. Դիմորդների ընտրության համար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով ստեղծվում է մանդատային հանձնաժողով: Նույն հրամանով հաստատվում է ընդունելության գործընթացի ժամանակացույցը:

26. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով կարող է հայտարարվել միասնական ընդունելություն-մրցույթ, որի համար հայտարարվող տեղերի

թիվը չի կարող գերազանցել տվյալ ուսումնական տարվա համար արհեստագործական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտության անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) ընդունելության համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ազատ տեղերի թիվը:

27. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով հայտարարվող տեղերի թվից կարող են սահմանվել առանձին տեղեր իգական սեռի դիմորդների (ծառայողների), ինչպես նաև առանձին մարզերի կամ Երևան քաղաքի ստորաբաժանումներում պաշտոնի նշանակվելու նպատակով ընդունելության դիմում (զեկուցագիր) ներկայացնող դիմորդների (ծառայողների) համար:

28. Ընդունելության ստուգումների կազմակերպման և ընթացքի վերահսկման նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

29. Դիմորդը Կրթահամալիր է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ ոստիկանության կողմից տրված՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ)՝ պատճենով.

2) դիմում.

3) բարձրագույն կրթության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)՝ պատճենով.

4) 4 լուսանկար (4x6 չափսի).

5) զինվորական գրքույկ (արական սեռի դիմորդների համար).

6) մերձավոր ազգականների (հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին/կին, ամուսնու/կնոջ հայր, մայր, քույր, եղբայր, զավակ) անձնագրերը, մահացած լինելու դեպքում՝ մահվան վկայականը և դրա պատճենը, դիմորդի ամուսնացած լինելու դեպքում՝ նաև ամուսնության վկայականը, անչափահաս լինելու դեպքում՝ ծննդյան վկայականը.

7) սոցիալական քարտ կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանք՝ պատճենով.

8) տեղեկանք բնակության վայրից.

9) տեղեկանք հաշվառման վայրից.

10) իրազեկման թերթիկ՝ հույժ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չտրամադրելու կամ այդ թույլտվությունը դադարեցնելու իրավական հետևանքների, ինչպես նաև ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ լիցենզավորված բժշկական կազմակերպությունում ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին) անցնելու պարտականության և այդ ստուգման դրական արդյունքի իրավական հետևանքների վերաբերյալ (համաձայն Ձև 1-ի):

30. Դիմորդները ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար յուրաքանչյուր ստուգման ձևի համար վճարում են 1500-ական (հազար հինգհարյուրական) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարները մուտքագրվում են Կրթահամալիրի բանկային հաշվին: Անկախ մրցույթին մասնակցելուց և ընդունելության արդյունքից՝ վճարված գումարը հետ չի վերադարձվում:

31. Ընդունելության ստուգումները անցկացվում են հայերենով:

32. Ընդունելության ստուգումներն են՝

1) ֆիզիկական պատրաստականության ստուգումը.

2) մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումը (թեստավորումը):

33. Ֆիզիկական պատրաստականության ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ոստիկանության ծառայողին

ներկայացվող ֆիզիկական պատրաստականության նորմատիվներին համապատասխան՝ ըստ բժշկատարիքային խմբերի:

34. Ընդունող հանձնաժողովն իրավունք ունի ծածկագրից օգտվող կամ ստուգման բնականոն ընթացքը խանգարող դիմորդին (ծառայողին) զրկելու տվյալ և հետագա ստուգմանը մասնակցելու իրավունքից:

35. Ստուգումների արդյունքները դիմորդներին հայտնվում են ստուգման օրը: Դիմորդն իրավունք ունի մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգման (թեստավորում) արդյունքները բողոքարկել ընդունող հանձնաժողովին՝ գնահատականը հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում: Բողոքարկման կարգը սահմանվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

36. Անհարգելի պատճառով ստուգման չներկայացած կամ անբավարար գնահատական ստացած դիմորդը զրկվում է հետագա ստուգմանը մասնակցելու իրավունքից:

37. Հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված) ստուգմանը չներկայացած դիմորդներին (ծառայողներին) թույլատրվում է հանձնել այն, եթե ժամանակացույցով տվյալ ստուգման ձևի համար սահմանված ժամկետը չի ավարտվել:

38. Ընդունելության յուրաքանչյուր ստուգումից դրական միավորներ հավաքած դիմորդները անցնում են հարցազրույց:

39. Հարցազրույցի ընթացքում հարցազրույցի հանձնաժողովը ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված հարցաշարի միջոցով ստուգում է դիմորդների անձնական որակները և արժանիքները, ընդհանուր հոգեբանական նկարագիրը, ներառյալ ինքնատիրապետման, վարվեցողության, ունկնդրելու կարողության և հաղորդակցության հմտությունները, ինչպես նաև ընդհանուր գիտելիքները:

40. Հարցազրույցի արդյունքներով, հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ յուրաքանչյուր դիմորդի (ծառայողի) համար կայացվում է դրական կամ բացասական որոշում: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը: Բացասական որոշում կայացնելու դեպքում դիմորդը համարվում է ընդունելությունը չանցած:

41. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած են համարվում այն դիմորդները (ծառայողները), որոնց նկատմամբ հարցազրույցի արդյունքներով կայացվել է դրական որոշում, և որոնք ընդունելության (մրցույթի) ստուգումներից հավաքած միավորների հանրագումարով զբաղեցրել են ընդունելության (մրցույթի) սահմանված տեղերը՝ ըստ դիմումում նշված երկու հայտերի հերթականության:

42. Հավասար միավորների դեպքում մրցույթում ըստ հերթականության առավելությունը տրվում է այն դիմորդներին (ծառայողներին)՝

1) որոնք մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումից (թեստավորում) ստացել են ավելի բարձր միավոր.

2) որոնց ավարտական փաստաթղթի գնահատականների միջին թվաբանականն ավելի մեծ է:

43. Ստուգումները հանձնած, սակայն մրցույթով չանցած դիմորդներին իրենց ցանկությամբ տրվում է ստուգումների արդյունքների մասին համապատասխան տեղեկանք:

44. Մրցույթով անցած դիմորդի հետ, մինչև նրան որպես սովորող հրամանագրելը, Կրթահամալիրը կնքում է ուսման համար պետության կողմից կատարված ծախսերի փոխհատուցման պայմանագիր:

45. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած դիմորդները համարվում են սովորող՝ Կրթահամալիրի ռեկտորի հրամանով, իսկ նախկին ծառայող հանդիսացող և

միջին, ավագ, գլխավոր կամ դրանց հավասարեցված կոչում ունեցող դիմորդները՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով:

46. Ուսումնառության մեկնարկից հետո սովորողների՝ Կրթահամալիրից ազատման դեպքում ընդունող հանձնաժողովի նախագահը կարող է ուսումնառության մեկնարկից ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում հրավիրել ընդունող հանձնաժողովի նիստ, և ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած կարող են համարվել նախկինում մրցույթով չանցած այն դիմորդները (ծառայողները), որոնց նկատմամբ հարցազրույցի արդյունքներով կայացվել է դրական որոշում: Այդ դեպքում կիրառվում են սույն կարգի 41-րդ, 42-րդ, 44-րդ և 45-րդ կետերի դրույթները:

3. «ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՊԱՐԵԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

47. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կրթահամալիր)՝ «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ արհեստագործական կրթական ծրագրով դիմորդների ընդունելության (այսուհետ՝ ընդունելություն) և ոստիկանության պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար ոստիկանության ծառայողների վերապատրաստման (այսուհետ՝ մրցույթ) հետ կապված հարաբերությունները:

48. Ընդունելության համար կարող են դիմել ոստիկանության ծառայող չհանդիսացող, 18 տարին լրացած այն անձինք (այսուհետ՝ դիմորդ), որոնք համապատասխանում են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 11-րդ և 55-րդ հոդվածների պահանջներին և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» № 175-Ն որոշման առաջին հավելվածով նախատեսված ֆիզիկական պատրաստականության նորմատիվների հանձնում ենթադրող բժշկատարիքային խմբերին:

49. Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել ոստիկանության ծառայողները (այսուհետ՝ ծառայող), բացառությամբ հեռակա ուսուցման ձևով ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում, լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում, ինչպես նաև լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակներում սովորողների:

50. Դիմորդի (ծառայողի) տարիքը և ծառայողի ծառայության ստաժը հաշվարկվում է ընդունելության (մրցույթի) ստուգումների համար նախատեսված ժամանակացույցով սահմանված ժամկետի վերջին օրվա դրությամբ:

51. Դիմորդների ընտրության համար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով ստեղծվում է մանդատային հանձնաժողով: Նույն հրամանով հաստատվում է ընդունելության (մրցույթի) գործընթացի ժամանակացույցը:

52. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով կարող է հայտարարվել միասնական ընդունելություն-մրցույթ, որի համար հայտարարվող տեղերի թիվը չի կարող գերազանցել տվյալ ուսումնական տարվա համար արհեստագործական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտության անվճար ուսուցման (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) ընդունելության համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ազատ տեղերի թիվը:

53. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով հայտարարվող տեղերի թվից կարող են սահմանվել առանձին տեղեր իգական սեռի

դիմորդների (ծառայողների), ինչպես նաև ոստիկանության պարեկային ծառայության առանձին մարզերի կամ Երևան քաղաքի ստորաբաժանումներում պաշտոնի նշանակվելու նպատակով ընդունելության դիմում (զեկուցագիր) ներկայացնող դիմորդների (ծառայողների) համար:

54. Դիմորդը Կրթահամալիր է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ ոստիկանության կողմից տրված՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ)՝ պատճենով.

2) դիմում.

3) կրթության մասին վկայական՝ դիպլոմ կամ ատեստատ՝ պատճենով.

4) 4 լուսանկար (4x6 չափսի).

5) զինվորական գրքույկ (արական սեռի դիմորդների համար).

6) մերձավոր ազգականների (հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին/կին, ամուսնու/կնոջ հայր, մայր, քույր, եղբայր, զավակ) անձնագրերը, մահացած լինելու դեպքում՝ մահվան վկայականը և դրա պատճենը, դիմորդի ամուսնացած լինելու դեպքում՝ նաև ամուսնության վկայականը, անչափահաս լինելու դեպքում՝ ծննդյան վկայականը.

7) սոցիալական քարտ կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանք՝ պատճենով.

8) տեղեկանք բնակության վայրից.

9) տեղեկանք հաշվառման վայրից.

10) «Բ» կարգի վարորդական վկայականը՝ պատճենով կամ պարտավորագիր՝ դասընթացները սկսելու օրվանից երկու ամսվա ընթացքում «Բ» կարգի վարորդական վկայականը ներկայացնելու վերաբերյալ (համաձայն Ձև 2-ի):

55. Ծառայողը մրցույթին մասնակցելու համար ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի միջոցով զեկուցագիր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին: Զեկուցագրին կցվում է ծառայողական բնութագիրը: Զեկուցագրում ծառայողը պետք է հավաստի, որ ունի «Բ» կարգի վարորդական վկայական կամ պարտավորվի մրցույթով անցնելու դեպքում դասընթացները սկսելու օրվանից երկու ամսվա ընթացքում Կրթահամալիրի ռեկտորին ուղղված զեկուցագրով հավաստել «Բ» կարգի վարորդական վկայականը ձեռք բերելու փաստը:

56. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կադրային ստորաբաժանումը մրցույթին մասնակցելու համար զեկուցագիր ներկայացրած ծառայողների վերաբերյալ նախապատրաստված նյութերը մրցույթի ստուգումների անցկացման համար սույն կարգով նախատեսված ժամանակացույցով սահմանված ժամկետի սկզբից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ ուղարկում է ընդունող հանձնաժողովին:

57. Դիմորդները (ծառայողները) ընդունելության (մրցույթի) գործընթացի կազմակերպման և անցկացման համար յուրաքանչյուր ստուգման ձևի համար վճարում են 1500-ական (հազար հինգհարյուրական) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարները մուտքագրվում են Կրթահամալիրի բանկային հաշվին:

58. Անկախ մրցույթին մասնակցելուց և ընդունելության արդյունքից՝ վճարված գումարը հետ չի վերադարձվում:

59. Ընդունելության (մրցույթի) ստուգումները անցկացվում են հայերենով:

60. Ընդունելության (մրցույթի) ստուգումներն են.

1) ֆիզիկական պատրաստականության ստուգումը.

2) մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումը (թեստավորումը):

61. Ֆիզիկական պատրաստականության ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության նորմատիվներին համապատասխան՝ ըստ բժշկատարիքային խմբերի:

62. Ընդունող հանձնաժողովն իրավունք ունի ծածկագրից օգտվող կամ ստուգման բնականոն ընթացքը խանգարող դիմորդին (ծառայողին) զրկելու տվյալ և հետագա ստուգմանը մասնակցելու իրավունքից:

63. Ստուգումների արդյունքները դիմորդներին (ծառայողներին) հայտնվում են ստուգման օրը: Դիմորդը (ծառայողը) իրավունք ունի մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգման (թեստավորում) արդյունքները բողոքարկել ընդունող հանձնաժողովին՝ գնահատականը հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում: Բողոքարկման կարգը սահմանվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

64. Անհարգելի պատճառով ստուգման չներկայացած կամ անբավարար գնահատական ստացած դիմորդը (ծառայողը) զրկվում է հետագա ստուգմանը մասնակցելու իրավունքից:

65. Հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված) ստուգմանը չներկայացած դիմորդներին (ծառայողներին) թույլատրվում է հանձնել այն, եթե ժամանակացույցով տվյալ ստուգման ձևի համար սահմանված ժամկետը չի ավարտվել:

66. Ընդունելության (մրցույթի) յուրաքանչյուր ստուգումից դրական միավորներ հավաքած դիմորդները (ծառայողները) անցնում են հարցազրույց:

67. Հարցազրույցի ընթացքում հարցազրույցի հանձնաժողովը ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված հարցաշարի միջոցով ստուգում է դիմորդների (ծառայողների) անձնական որակները և արժանիքները, ընդհանուր հոգեբանական նկարագիրը՝ ներառյալ ինքնատիրապետման, վարվեցողության, ունկնդրելու կարողության և հաղորդակցության հմտությունները, ինչպես նաև ընդհանուր գիտելիքները:

68. Հարցազրույցի արդյունքներով, հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ յուրաքանչյուր դիմորդի (ծառայողի) համար կայացվում է դրական կամ բացասական որոշում: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը: Բացասական որոշում կայացնելու դեպքում դիմորդը (ծառայողը) համարվում է ընդունելությունը (մրցույթը) չանցած:

69. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած են համարվում այն դիմորդները (ծառայողները), որոնց նկատմամբ հարցազրույցի արդյունքներով կայացվել է դրական որոշում, և որոնք ընդունելության (մրցույթի) ստուգումներից հավաքած միավորների հանրագումարով զբաղեցրել են ընդունելության (մրցույթի) սահմանված տեղերը:

70. Հավասար միավորների դեպքում մրցույթում, ըստ հերթականության, առավելությունը տրվում է այն դիմորդներին (ծառայողներին)՝

1) որոնք մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումից (թեստավորում) ստացել են ավելի բարձր միավոր.

2) որոնց ավարտական փաստաթղթի գնահատականների միջին թվաբանականն ավելի մեծ է:

71. Ստուգումները հանձնած, սակայն մրցույթով չանցած դիմորդներին (ծառայողներին) իրենց ցանկությամբ տրվում է ստուգումների արդյունքների մասին համապատասխան տեղեկանք:

72. Մրցույթով անցած դիմորդի հետ, մինչև նրան որպես սովորող հրամանագրելը, Կրթահամալիրը կնքում է ուսման համար պետության կողմից կատարված ծախսերի փոխհատուցման պայմանագիր: Մրցույթով անցած ծառայողի հետ, մինչև նրան

վերապատրաստման նպատակով Կրթահամալիր գործուղելը, ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումը կնքում է ուսման համար պետության կողմից կատարված ծախսերի փոխհատուցման պայմանագիր:

73. Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած դիմորդները համարվում են սովորող՝ Կրթահամալիրի ռեկտորի հրամանով, իսկ նախկին ծառայող հանրիսացող և միջին, ավագ, գլխավոր կամ դրանց հավասարեցված կոչում ունեցող դիմորդները՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով: Ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած ծառայողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվում են կադրերի գործող ռեզերվում և գործուղվում Կրթահամալիր:

74. Ուսումնառության մեկնարկից հետո սովորողների՝ Կրթահամալիրից ազատման (ծառայողների վերապատրաստման դադարեցման) դեպքում ընդունող հանձնաժողովի նախագահը կարող է ուսումնառության մեկնարկից ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում հրավիրել ընդունող հանձնաժողովի նիստ, և ընդունող հանձնաժողովի որոշմամբ մրցույթով անցած կարող են համարվել նախկինում մրցույթով չանցած այն դիմորդները (ծառայողները), որոնց նկատմամբ հարցազրույցի արդյունքներով կայացվել է դրական որոշում: Այդ դեպքում կիրառվում են սույն կարգի 69-րդ, 70-րդ, 72-րդ և 73-րդ կետերի դրույթները:

75. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության ջրային ստորաբաժանումում պաշտոնի նշանակումը կատարվում է առանձին մրցույթի արդյունքներով՝ վերապատրաստման հիման վրա: Մրցույթը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը: Մրցույթի անցկացման կարգը և պայմանները սահմանվում են մրցութային հանձնաժողովի որոշմամբ:

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ես՝ _____ս, սույնով հավաստում եմ, որ
անուն, հայրանուն, ազգանուն

տեղեկացված եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանությունում կամ համայնքային ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ընդունվելու դեպքում իմ նկատմամբ իրականացվելու են «Պետական գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված՝ հույժ գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն տրամադրելու նպատակով ստուգողական միջոցառումներ, և եթե մինչև հույժ գաղտնի տեղեկություններ պարունակող դասընթացների մեկնարկը (ըստ ուսումնական պլանի և դասացուցակի) ինձ չտրամադրվի համապատասխան թույլտվություն կամ տրամադրված թույլտվությունը օրենքով նախատեսված կարգով դադարեցվի մինչև ուսումնառության ավարտը, ապա ես ազատվելու եմ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից:

Տեղեկացված եմ նաև, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանությունում կամ համայնքային ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ընդունվելու դեպքում ուսումնառությունը սկսելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր եմ լինելու լիցենզավորված բժշկական կազմակերպությունում իմ հաշվին անցնել թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի օգտագործման վերաբերյալ ստուգում (ափիոնային շարք, կաննաբինոիդներ և մեթամֆետամին), և այդ ստուգման դրական արդյունքի դեպքում ազատվելու եմ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից:

_____	_____	_____
ստորագրություն	անուն, հայրանուն, ազգանուն,	ամսաթիվ

Ձև 2

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

Ես՝ _____ս, սույնով պարտավորվում եմ
անուն, հայրանուն, ազգանուն

«Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ արհեստագործական կրթական ծրագրով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր ընդունվելու դեպքում դասընթացները սկսելու օրվանից երկու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտորին ուղղված զեկուցագրով հավաստել «Բ» կարգի վարորդական վկայականը ձեռք բերելու փաստը՝ զեկուցագրին կից ներկայացնելով վարորդական վկայականի պատճենը և իրավասու անձին ներկայացնելով վկայականի բնօրինակը:

Տեղեկացված եմ, որ սահմանված ժամկետում վարորդական վկայականը չներկայացնելու դեպքում իմ ուսումնառությունը դադարեցվելու է:

_____	_____	_____
ստորագրություն	անուն, հայրանուն, ազգանուն,	ամսաթիվ